

01.08.2008

Այցելություն Գեղարքունիք՝ կարտոֆիլի սերմ արտադրողների կոոպերատիվ և Նոր Գեղի համայնք (Կոտայքի մարզ)՝ ցուցադրական ֆերմա

Մարգարիտ հերթական այցելության շրջանակներում ՀՄՀ-Հայաստան ծրագրի ներկայացուցիչները եղան Գեղարքունիքում և Կոտայքում: **Գեղարքունիքի մարզի Գագարին համայնքում** իր գործունեությունն է ծավալում կարտոֆիլի սերմ արտադրողների կոոպերատիվը, որի հետ համագործակցում է Ջրից դեպի շուկա բաղադրիչը: Կոոպերատիվը հիմնադրվել է 2002թ՝ նպատակ ունենալով Հայաստան ներկրել բարձրորակ կարտոֆիլի սերմ և տարածել այն ֆերմերների շրջանում: Ներկայումս կոոպերատիվը բարձրորակ կարտոֆիլի սերմեր է ներկրում մի շարք եվրոպական երկրներից (Գերմանիա, Հոլանդիա և այլն), ինչպես նաև՝ կազմակերպում է վերջինիս տեղական վերարտադրությունը սեփական 100 հա հողատարածքում: Կոոպերատիվը աշխատում է Գեղարքունիքի, Արմավիրի, Լոռվա, Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի և Արարատի մարզերում շուրջ 400 ֆերմերի հետ:



Կոոպերատիվի նախագահ Սամվել Խաչատրյանը և ՀՄՀ-Հայաստան թիմի անդամները

Ջրից դեպի շուկա ծրագիրը համագործակցում է կոոպերատիվի հետ 2008թ-ի հունվար ամսից՝ մի շարք ուղղություններով.

- ռազմավարական և բիզնես պլանավորում, որի արդյունքում մշակվել է ներդրումային ծրագիր ձեռնարկության լիարժեք աշխատանքը կազմակերպելու համար,
- ՍԹԱԲ Դ-իվայդ սուպերմարքեթների ցանցի հետ բանակցությունների արդյունքում, ծրագրի աջակցությամբ, կողմերը պայմանավորվել են կարտոֆիլի երկարատև մատակարարման ծրագրի վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մեկ տարվա կտրվածքով մատակարարել շուրջ 800 տոննա պարենային կարտոֆիլ,
- ՍԹԱԲ-ի պահանջները բավարարելու համար ընկերությանը անհրաժեշտ է մասնագիտական խորհրդատվություն սառնարանային և օդափոխման համակարգերի վերաբերյալ և Ջրից դեպի շուկա ծրագիրը հրավիրելու է համապատասխան փորձագետի,
- Ջրից դեպի շուկա ծրագիրը նախատեսում է նաև աջակցել ընկերությանը պարենային կարտոֆիլի տեսակավորման և փաթեթավորման սարքավորումներ հայթայթելու ու ձեռք

բերելու հարցում, ինչպես նաև՝ ծրագրի ավելի ուշ փուլում կարտոֆիլի ապրանքանիշի մշակման, համապատասխան մարքեթինգային ու խթանման քաղաքականության մշակման ու իրագործման հարցերում:

Կոոպերատիվի նախագահ Սամվել Խաչատրյանի խոսքով այսօր գյուղատնտեսության ոլորտը զարգացնելու նախապայմաններից մեկը ֆերմերների միավորումն է կոոպերատիվների կամ միությունների ներքո:

Մամվել Խաչատրյան - Մենք փորձում ենք մեր շրջակայքի ֆերմերներին միավորել և մարդիկ զգացել են, որ միակ ճիշտ տարբերակը դա է: Մենք նրանց համար բազմաթիվ հարցեր ենք լուծում. քիմիկատների, պարարտանյութերի, սերմերի, գյուղտեխնիկայի, իրացման հարցերը: Մեզ՝ հիմնադիրներին դա ձեռնտու է, քանի որ կոոպերատիվի միջոցով հեշտությամբ իրացնում ենք ներկրված սերմերի, նաև՝ արտասահմանյան ընկերությունները նախընտրում են աշխատել այսպիսի կազմակերպությունների հետ: Իսկ գյուղացու համար կոոպերատիվը ձեռնտու է, որովհետև մենք ներկրում ու նրան ենք մատակարարում որակյալ սերմ, քիմիկատ (մոտ 20 տոկոս էժան շուկայականից), հետևում ենք, որ ճիշտ մշակեն, աճեցնեն, խորհուրդներ ենք տալիս՝ ինչպես մշակեն, ինչպես ջրեն, որ լավ բերք ստանան, լավ եկամուտ ստանան և մեզնից զնված սերմերի համար վճարեն: Օգնում ենք նաև իրացման հարցում, նրանց համար հաճախորդ ենք բերում:

Այցելության հաջորդ թիրախը **Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքն** էր, որտեղ ֆերմեր Արամ Մելքոնյանի այգում տեղադրվել է ոռոգման կաթիլային համակարգ: Սա քիչ ծախս պահանջող ոռոգման տեխնոլոգիա է, որը տնտեսում է ջուրը և աշխատանքը: Այստեղ տեխնոլոգիան կիրառելի է երիտասարդ ընկուզենու համար, ինչպես նաև՝ հնարավորություն է տալիս միաժամանակ պարարտացնել:



Ոռոգման կաթիլային համակարգը

Ծառերը գտնվում են թեքության վրա, ինչն ապահովում է տարածքի արդյունավետ օգտագործում:

Ոռոգման այս համակարգը նախագծվել է ծառերի դասավորվածությանը համապատասխան: Այստեղ կա 75 երիտասարդ ծառ և յուրաքանչյուր ծառի համար տեղադրված էր մեկ միկրոջեթ, որը հետագայում ֆերմերի խնդրանքով փոխարինվեց 2 կաթոցիկով: Բուն ոռոգման համակարգը բաղկացած է ջրի բաքից, խողովակներից, կաթոցիկներից, ֆիլտրից, ինժեկտորից, ջրաչափից և այլ չափիչ սարքերից: